8315

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«29» 07 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 199 - 25

Նախաձեռնող՝ «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, Լճաշեն, 2-րդ փողոց, 48 փուն

Գործունեությունը՝ Լճաշենի բազալտների հանքավայրի արդյունահանում
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 199 - 25

«29» 07 **2025թ.**

Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն բնակավայր

Ներածական մաս. «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ն նախատեսում է օգտակար հանածոյի՝ բազալտի արդյունահանում իրականացնել Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտների հանքավայրում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ՀՕ-150-Ն (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասում: Տեղամասի կենտրոնական հատվածի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնություն՝ 40°30'15,3", արևելյան երկայնություն՝ 44°57'1.6": Բացահանքի օտարման տարածքը կազմում է 15.466 հա: Հայցվող տեղամասն ուղիղ գծով գտնվում է Լճաշեն և Չկալովկա գյուղերը միացնող ասֆալտապատ ճանապարհից 200 մետր դեպի հարավ: Երևան–Սևան–Գավառ ավտոմայրուղուց այն գտնվում է 680 մետր դեպի հարավ, իսկ երկաթգծից՝ 55 մետր դեպի հյուսիս-արևելք: Սևանա լճից հայցվող տարածքը գտնվում է 600 մետր դեպի հարավ, «Սևան» ազգային պարկից 240 մետր հեռավորության վրա:

Նկարագրական մաս. Լճաշենի բազալտների հանքավայրի հայցվող տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են բաց եղանակով օգտակար հանածոյի արդյունահանման համար: Բացահանքում օգտակար հանածոյի անջատումը զանգվածից իրականացվելու է հիդրավլիկ մուրճի օգնությամբ: Արդյունահանվող օգտակար հանածոն՝ բազալտը, նախատեսվում է արդյունահանել որպես պատքարեր՝ օրական 116.77մ³, ջարդևքարեր՝ օրական 233.88մ³: Արդյունահանման արդյունքում առաջացող ջարդքարերը /66,7%/ կարող են օգտագործվել որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար:

Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել 20 տարվա ընթացքում: Մակաբացման ապարներն ըստ հաշվետվության, բացակայում եմ ամբողջ հայցվող տարածքում:

«ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ի կողմից Լճաշենի բազալտների հանքավայրից հայցվող տեղամասի պաշարները կազմում են 2329.94հազ. մ³, որից ՝ A –կարգով՝ 691946 մ³, B-կարգով՝ 1541418 մ³, C1 կարգով՝ 96576 մ³:

Արդյունահանված օգտակար հանածոն իրացվելու է տեղում՝ սպառողի ավտոտրանսպորտով: Արդյունահանման աշխատանքները կատարվելու են էքսկավատորի միջոցով՝ առանց հորատապայթեցման: Արդյունահաման ընթացքում իրականացվու է մշակված տարածքի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա:

Հայցվող տեղամասի կոորդինատներն են (ARMWGS-84 համակարգով)՝

1. Y=8495828.2409 X=4485298.9624,
2. Y=8495730.0208 X=4485346.2808,
3. Y=8495734.6872 X=4485364.0930,
4. Y=8495675.7192 X=4485478.8270,
5. Y=8495583.2522 X=4485461.8730,
6. Y=8495594.4964 X=4485411.5710,
7. Y=8495519.7412 X=4485447.5851,
8. Y=8495627.4942 X=4485726.0920,
9. Y=8495871.2142 X=4485784.1440,
10. Y=8496008.1252 X=4485810.6300,
11. Y=8496028.3337 X=4485809.4160,
12. Y=8496029.0536 X=4485808.9374,
13. Y=8496057.3450 X=4485751.4495,
14. Y=8495972.9347 X=4485540.2241,
15. Y=8495828.2409 X=4485298.9624:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ, Օրենքով սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժիններից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքները ամփոփվել են, որոնց ավելացվել են նաև մասնագետի դիտողություններ ու առաջարկությունները և հաշվետվությունն ուղղարկվել է «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ին լրամշակման:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել են հանրային լսումներ Սևան համայնքի Լճաշեն բնակավայրում:

Փորձաքննական գործընթացում հայցվող տարածքի հողամասի նպատակային ու գործառնական նշանակության վերաբերյալ ստացվել են տարբեր կարծիքներ պետական լիազոր մարմիններից և փաստագրվել է, որ առկա են անհամապատասխանություններ, մասնավրապես՝ կադաստրի կոմիտեի կողմից տրված կարծիքի համաձայն հայցող տարածքը հանդիսանում է՝ գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, Գեղարքունիքի մարզպետարանի կարծիքի համաձայն՝ պատմական և մշակութային հող է, իսկ ԿԳՄՍ նախարարության կողմից տրված կարծիք՝ Լճաշենի հնավայրի լանդշաֆտի պահպանման գոտի է:

Պետական փորձաքննական եզրակացությունը կազմվել է հիմք ընդունելով հետևյալ փորձաքննական հիմնավորումները՝

1. համաձայն փորձաքննական գործընթացում ներգրավված ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված կարծիքի, որում նշվել են նաև կոորդինատներ, հայցվող տարածքն ամբողջությամբ գտնվում է Լճաշենի հնավայրի լանդշաֆտի պահպանման գոտու սահմաններում: Լճաշենի հնավայրն ընդգրկված է «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2007 թվականի մարտի 15-ի N 385 Ն որոշմամբ հաստատված ցուցակի մեջ: Համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հուշարձանի պահպանական գոտիների տարածքը դասվում է պատմամշակութային նշանակության հողերի կատեգորիային և ունի այդ հողերի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավիճակ և օգտագործման ռեժիմ: Ելնելով վերոգրյալից՝ փաստագրվում է, որ լանդշաֆտի պապիպանման գոտին ևս հանդիսանում է Լճաշենի հնավայրի տարածք: Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե հայցվող տեղամասում կան բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ: Հարկ է նշել նաև, որ Լճաշեն հնավայրի լանդշաֆտի պահպանման գոտու սահմաններում է գտնվում նաև «Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ) երկրաբանական հուշարձանը, որը գրանցված է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի № 967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձանների ցանկում:
2. Համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանի հանքի սանիտարապաշտպանիչ գոտին սահմանվում է 300 մետր, որը

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

համադրվում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքի հետ: Հայցվող տարածքի քամիների վարդերի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեկան կտրվածքով քամիները փչում են հյուսիս-արևելք ուղղությամբ՝ դեպի «Սևան» ԱՊ ու Սևանա լիճ և արդյունահանման ընթացքում առաջացող փոշին և թափոնները քամու և անձրևաջրերի միջոցով կարող են ներթափանցել «Սևան» ԱՊ և Սևանա լիճ, ինչը բացասական ազդեցություն կունենա Սևանա լճի էկոհամակարգի վրա: Համաձայն «Սևանա լճի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի՝ հայցվող տարածքը գտնվում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում, որը Օրենքի 8-րդ հոդվածի 1-ի կետի համաձայն, համարվում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անմիջական ազդեցության գոտում արգելվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

23.07.2025թ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան